



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

*Երևան, Կառավարական փուն 1*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ № 01/04**

(Քաղաքացի Վաղարշ Բադալյանի 20.02.2018թ.-ի վարչական բողոքը բավարարելու մասին)

**Ք. ԵՐԵՎԱՆ**

**«06» ԱՊՐԻԼԻ 2018թ.**

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ նախագահությամբ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 19.12.2017թ. թիվ 67/2 որոշման վերաբերյալ քաղաքացի Վաղարշ Բադալյանի 19.02.2018թ.-ի վարչական բողոքը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց**

**1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.**

Վաղարշ Բադալյանը (այսուհետ նաև՝ Բողոք բերած անձ) 20.02.2018թ.-ին բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Գանգատարկման հանձնաժողով) 19.12.2017թ. թիվ 67/2 որոշման (այսուհետ՝ նաև Որոշում) վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 20.02.2018թ.-ին:

Բողոք բերած անձը նշել է, որ 03.08.2017թ.-ին անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենա (այսուհետ՝ նաև Ավտոմեքենա), որի համար մաքսային վճարները կատարելու և ավտոմեքենան

հաշվառելու նպատակով 07.08.2017թ.-ին ներկայացել է Արարատյան մաքսատուն-վարչություն:

Ըստ Բողոք բերած անձի՝ փաստաթղթերը լրացնելիս մաքսատան աշխատակիցներն Ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշելու հիմք չընդունեցին իր կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագիրը, որի համաձայն Ավտոմեքենայի գինը կազմում էր 1.249 ԱՄՆ դոլար: Փոխարենը՝ մաքսատան աշխատակիցները որոշեցին, որ Ավտոմեքենայի մաքսային արժեքը կազմում է 2.650 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որպես հաշվարկման հիմք նշելով Մաքսային Միության Մաքսային Օրենսգրքի 361-րդ հոդվածի 2-րդ մասը:

Համաձայն չլինելով սահմանված մաքսային արժեքի հետ՝ Բողոք բերած անձը բողոք է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողով, որի 19.12.2017թ.-ի թիվ 67/2 որոշմամբ գանգատը մերժվել է:

Բողոք բերած անձը որպես իր բողոքի իրավական և փաստական հիմքեր նշել է, որ ֆիզիկական անձանց կողմից Մաքսային Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային արժեքը սահմանվում է Մաքսային Միության Մաքսային Օրենսգրքի 361-րդ հոդվածով, որի 1-ին կետի համաձայն. «Անձնական օգտագործման ապրանքների մաքսային արժեքը սահմանվում է ֆիզիկական անձի կողմից այդ ապրանքների հայտագրված արժեքի հիման վրա, որը հաստատվում է անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերի բնօրինակներով»: Սույն նորմի բովանդակությունից բխում է, որ մաքսային մարմնի համար ֆիզիկական անձանց կողմից Մաքսային Միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների մաքսային արժեքը որոշելու հիմք հանդիսանում են հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, այդ թվում՝ հաշիվ-ապրանքագրի բնօրինակը:

Միևնույն ժամանակ Մաքսային Միության Մաքսային Օրենսգրքի 361-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «Այն դեպքում, երբ անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը չունի այդ ապրանքների արժեքի մասին անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, կամ եթե կան հիմնավոր պատճառներ ենթադրելու, որ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և տեղեկություններն արժանահավատ չեն, մաքսային մարմնի պաշտոնատար անձը

սահմանում է ապրանքների մաքսային արժեքը մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա, այդ թվում նույնանման ապրանքների մանրաձախ առևտուր իրականացնող օտարերկրյա ընկերությունների կատալոգներում նշված տվյալների հիման վրա»։ Այսինքն, ըստ Բողոք բերած անձի, մաքսային մարմինն ինքնուրույն է սահմանում ապրանքի մաքսային արժեքն այն դեպքում, երբ ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը չունի այդ ապրանքների արժեքի մասին անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, կամ եթե կան հիմնավոր պատճառներ ենթադրելու, որ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և տեղեկություններն արժանահավատ չեն։ Գանգատարկման հանձնաժողովը 19.12.2017թ. թիվ 67/2 որոշմամբ ըստ էության ներկայացված փաստաթղթերն արժանահավատ չի համարել, քանի որ Ավտոմեքենայի ձեռքբերման արժեքը չի համապատասխանել մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող համանման ավտոմեքենայի մասին գնային տեղեկությանը, որպիսի դիրքորոշումը, ըստ Բողոք բերած անձի, ՊԵԿ-ի կողմից իրականացված թերի վարչարարության արդյունքն է հետևյալ պատճառաբանությամբ.

1) ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը գնային տեղեկությունների համար ուսումնասիրել է [www.tradecarview.com](http://www.tradecarview.com) կայք էջը, մինչդեռ Գանգատարկման հանձնաժողովն իր կողմից ներկայացված գանգատի մեջ հստակ նշել է, որ Ավտոմեքենան ձեռք է բերել «<http://auc.japanstart.ru>» կայք էջից: Ըստ Բողոք բերած անձի՝ նման դիրքորոշմամբ ՊԵԿ-ը չի կատարել Մաքսային Միության հանձնաժողովի՝ «Ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգի մասին» թիվ 376 որոշման 6-րդ կետի<sup>1</sup> պահանջը, որտեղ նշվում է. «Ապրանքների մաքսային արժեքի հսկողությունն իրականացնելիս կարող են օգտագործվել մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տեղեկությունները, մասնավորապես՝ (...) բորսայական սակարկությունների (գնանշումների), աճուրդների գների վերաբերյալ, ինչպես նաև գնային կատալոգներից ստացված տեղեկությունները (...): Հսկողության արդյունքների օբյեկտիվությունն ապահովելու համար պետք է օգտագործվեն վերլուծվող գործարքի պայմանների հետ առավելագույնս հնարավոր համադրելի տեսք ունեցող տեղեկություններ»: Ընդ որում,

---

<sup>1</sup> Խոսքը գնում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, հսկողության և ճշգրտման կարգերի մասին» թիվ 376 որոշմամբ հաստատված ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգի մասին:

Բողոք բերած անձի պնդմամբ, թե՛ «<http://auc.japanstart.ru>» կայք էջի, որում առկա է գնային տեղեկությունների վիճակագրական լայն տվյալների բազա, թե՛ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ուսումնասիրված «[www.tradecarview.com](http://www.tradecarview.com)» կայք էջի ուսումնասիրության արդյունքում կարելի է համոզվել, որ իր կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրի միջին գնային տեղեկությունն արժանահավատ է, քանի որ էականորեն ցածր չէ նույնանման ապրանքների համար առկա գներից և նույնիսկ առկա են նույնանման ավտոմեքենաներ՝ իր կողմից ներկայացրած հաշիվ-ապրանքագրի մեջ նշված գնից ավելի ցածր գներով (ապացույցները ներկայացվում են բողոքին կից):

2) Որոշման մեջ նշված Գանգատարկման հանձնաժողովի դիրքորոշումն առ այն, որ «Վաղարշ Բադալյանը նշեց, որ ավտոմեքենան ձեռք է բերվել աճուրդի միջոցով, որի ժամանակ գները կարող են թե իջնել, թե բարձրանալ, սակայն նշված փաստը հիմնավորող որևէ ապացույց սույն գործում առկա չէ», հակասում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթին, որի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:

3) Գանգատարկման հանձնաժողովը թիվ 67/2 որոշման մեջ նշել է. «Հանձնաժողովը ևս գտնում է, որ 23.04.2017թ. թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրում արտացոլված տվյալները, մասնավորապես՝ Վաղարշ Բադալյանի կողմից «Honda Edix» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենան 1249 ԱՄՆ դոլարով ձեռք բերված լինելու վերաբերյալ, ըստ էության, արժանահավատ չեն: Բողոք բերած անձը նշել է, որ նման եզրակացության համար հիմք է հանդիսացել նաև այն փաստը, որ թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագիրը կազմված է 23.04.2017թ., սակայն վճարման հանձնարարականի համաձայն վճարումը կատարված է 24.04.2017թ. թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրի համար»: Ըստ Բողոք բերած անձի նման մոտեցումն անհասկանալի է, քանի որ հաշիվ-ապրանքագիրը կազմելուց հաջորդ օրը վճարումը կատարելը որևէ առարկայական կապ փաստաթղթերի արժանահավատության հետ չունի:

Բողոք բերած անձը նշել է, որ ելնելով ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի իրավակիրառ պրակտիկայի տրամաբանությունից՝ գործարքի գնի մեթոդը (Մաքսային Միության

Մաքսային Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին կետ) կիրառվում է միայն այն դեպքում, երբ հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերի մեջ նշված գինը համընկնում (կամ գերազանցում) է մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող՝ նույնանման ապրանքների մասին գնային տեղեկության հետ: Այսինքն՝ ապրանքի մաքսային արժեքը գործարքի գնով հաշվարկելը դառնում է բացառություն, այլ ոչ թե կանոն, ի նկատի ունենալով նաև ապրանք տեղափոխող ֆիզիկական անձանց բնական ձգտումը՝ գնել ապրանքն ավելի էժան գնով: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1176 որոշման մեջ նշում է, որ. «Վերլուծելով միջազգային իրավական ակտերով, մասնավորապես, «Առևտրի և սակագների մասին» 1994թ. Գլխավոր համաձայնագրով (VII գլուխ), ՄԱԿ-ի 1973 թվականի «Մաքսային ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման մասին» կոնվենցիայով (...) նախատեսված նորմերի սահմանադրաիրավական ընդհանուր բովանդակությունը՝ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ապրանքների ու տրանսպորտային միջոցների մաքսային սահմանով տեղափոխման կանոնակարգումը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, մաքսային իրավակարգավորումների նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:

Բողոք բերած անձի համոզմամբ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Մաքսային Միության Մաքսային Օրենսգրքի 361-րդ հոդվածի սխալ մեկնաբանումը և կիրառումը խախտում է իր իրավունքները, ստեղծում է հիմքեր կամայականության համար:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոք բերած անձը խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի 19.12.2017թ. թիվ 67/2 որոշումը և պարտավորեցնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին վերահաշվարկել Ավտոմեքենայի մաքսային արժեքը՝ իր կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն:

## **2. Մասնակցի դիրքորոշումը.**

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2018թ.-ի ապրիլի 06-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էր քաղաքացի Վաղարշ Բադայանը:

Վերջինս լսումների ընթացքում պնդեց բողոքի իրավական և փաստական հիմքերն ու հիմնավորումները:

### **3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն դիմումի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- Բողոք բերած անձը 01.11.2017թ. գանգատ է ներկայացրել Գանգատարկման հանձնաժողովին՝ խնդրելով վերահաշվարկել իր կողմից ներկրված «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքը՝ իր կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն, և ետ վերադարձնել մաքսային ձևակերպումների համար իր կողմից ավել վճարված գումարը:

- Գանգատի քննության արդյունքում Գանգատարկման հանձնաժողովի կողմից 19.12.2017թ. կայացվել է թիվ 67/2 որոշումը, որով գանգատը մերժվել է:

- Բողոք բերած անձը 20.02.2018թ. բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով վերահաշվարկել իր կողմից ներկրված «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքը՝ իր կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն, և ետ վերադարձնել մաքսային ձևակերպումների համար իր կողմից ավել վճարված գումարը, որից հետո՝ 22.02.2018թ. Հանձնաժողով ներկայացրած դիմումով հստակեցրել է իր պահանջը՝ խնդրելով անվավեր ճանաչել 19.12.2017թ. թիվ 67/2 որոշումը և պարտավորեցնել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին վերահաշվարկել իր կողմից ներկրված «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքը՝ իր կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն:

- Բողոք բերած անձի կողմից ներկայացվել են՝

- «<http://www.japanstart.ru>» կայքից տպված թվով 2 էջ, որի համաձայն՝ 2008թ. արտադրության «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի ավտոմեքենայի գինը սահմանված է 1.170 ԱՄՆ դոլար:

- «<http://www.tradecarview.com>» կայքից տպված թվով 4 էջ, որոնց համաձայն՝ 2008թ. արտադրության «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի ավտոմեքենայի գինը սահմանված է 1.450 ԱՄՆ դոլար:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված վարչական գործի նյութերում առկա են «<http://www.tradecarview.com>» կայքից տպված թվով 5 հատ էջեր, որոնցից առաջինի համաձայն՝ 2008թ. արտադրության «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի ավտոմեքենայի գինը սահմանված է 6.707 ԱՄՆ դոլար, երկրորդի համաձայն՝ 4.244 ԱՄՆ դոլար, երրորդի համաձայն՝ 1.450 ԱՄՆ դոլար, չորրորդի համաձայն՝ 1.500 ԱՄՆ դոլար, հինգերորդի համաձայն՝ 3.196 ԱՄՆ դոլար:

#### **4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.**

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման հետևյալ հիմնավորմամբ.

Հանձնաժողովը գտնում է, որ սույն բողոքի քննության համար էական է հետևյալ հարցադրումներին անդրադառնալը՝

1) քննարկվող գործի շրջանակներում մաքսային մարմինն իրավասու՞ էր արդյոք մաքսային արժեքը սահմանել մինչև 01.01.2018թ.-ը գործող՝ Մաքսային միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրք) 361-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ հիմք ընդունելով նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունները, այդ թվում՝ նույնանման ապրանքների մանրաձախ առևտուր իրականացնող օտարերկրյա ընկերությունների կատալոգներում նշված տվյալները:

2) Գանգատարկման հանձնաժողովի կողմից կատարվե՞լ է արդյոք փաստական հանգամանքների բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Առաջին հարցադրման առնչությամբ հարկ է նշել հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ քաղաքացի Վաղարշ Բադալյանը 03.08.2017թ. անձնական օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետություն է ներմուծել «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենան, որի ձեռքբերման արժեքը 23.04.2017թ. թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրի համաձայն կազմել է 1249 ԱՄՆ դոլար:

Անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման առանձնահատկությունները սահմանված են Օրենսգրքի 49-րդ գլխով:

Օրենսգրքի 351-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ նույն գլխում գործածվում են հետևյալ եզրույթները և դրանց սահմանումները՝ **անձնական օգտագործման տրանսպորտային միջոց՝** ավտոտրանսպորտային, մոտոտրանսպորտային միջոց, կցորդ, նավ կամ օդանավ դրա համար նախատեսված պահեստամասերով և սովորական պարագաներով, սարքավորումներով, դրա սովորական բաքերում պարունակվող վառելիքաքսուքային նյութերով և վառելիքով, որի սեփականատերը կամ տիրապետողը այն ֆիզիկական անձն է, որի կողմից այդ տրանսպորտային միջոցները մաքսային սահմանով տեղափոխվում են **բացառապես անձնական նպատակներով**, այլ ոչ թե վարձատրության դիմաց անձանց տրանսպորտային փոխադրման համար, վարձատրության դիմաց կամ անվճար հիմունքներով ապրանքների արդյունաբերական կամ առևտրային նպատակներով տրանսպորտային փոխադրման համար:

Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձնական օգտագործման ապրանքների մաքսային արժեքը սահմանվում է ֆիզիկական անձի կողմից այդ **ապրանքների հայտագրված արժեքի հիման վրա**, որը հաստատվում է անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերի բնօրինակներով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը չունի այդ ապրանքների արժեքի մասին անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, կամ եթե կան **հիմնավոր պատճառներ՝ ենթադրելու, որ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և տեղեկություններն արժանահավատ չեն**, մաքսային մարմնի պաշտոնատար անձը սահմանում է ապրանքների մաքսային արժեքը՝ մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող՝ նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա, այդ թվում՝ նույնանման ապրանքների մանրաձախ



առևտուր իրականացնող օտարերկրյա ընկերությունների կատալոգներում նշված տվյալների հիման վրա:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ անձնական օգտագործման ապրանքների մաքսային արժեքը սահմանվում է ֆիզիկական անձի կողմից և միայն այն դեպքում, երբ ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը չունի այդ ապրանքների արժեքի մասին անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, կամ եթե մաքսային մարմինը ունի հիմնավոր պատճառներ՝ ենթադրելու, որ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկություններն արժանահավատ չեն, ապրանքների մաքսային արժեքը սահմանվում է մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից՝ մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող՝ նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա:

Սույն գործով մաքսային մարմնի աշխատակիցների կողմից Ավտոմեքենայի վերաբերյալ Վաղարշ Բադալյանի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում եկել են այն եզրահանգման, որ ներկայացված փաստաթղթերն արժանահավատ չեն: Ավելին, Գանգատարկման հանձնաժողովի կողմից 23.04.2017թ. թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրում արտացոլված տվյալները՝ մասնավորապես՝ Վաղարշ Բադալյանի կողմից Ավտոմեքենան 1249 ԱՄՆ դոլարով ձեռք բերված լինելու վերաբերյալ գնահատվել է ոչ արժանահավատ՝ հիմք ընդունելով այն փաստը, որ վերոնշյալ հաշիվ-ապրանքագիրը կազմված է 23.04.2017թ.-ին, իսկ վճարման հանձնարարականի համաձայն՝ վճարումը կատարված է 24.04.2017թ. թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրի համար:

Այս կապակցությամբ Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 361-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված մաքսային մարմնի աշխատակցի իրավունքը՝ սահմանել ապրանքների մաքսային արժեքը՝ մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա, այդ թվում՝ նույնանման ապրանքների մանրաձախ առևտուր իրականացնող օտարերկրյա ընկերությունների կատալոգներում նշված տվյալների հիման վրա, չի կարող հիմնվել միայն ֆիզիկական անձի կողմից ներկայացված տեղեկատվության արժանահավատության կասկածի վրա, այլև նշված կասկածները պետք է հիմնավորվեն վարչական մարմնի կողմից և ձևավորվի եզրահանգում առ այն, որ ներկայացված փաստաթղթերը (և կամ) տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը:

Նշված եզրահանգումն ուղղակիորեն բխում է Օրենսգրքի 361-րդ հոդվածի 2-րդ մասի նշված՝ «**եթե կան հիմնավոր պատճառներ՝** ենթադրելու, որ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և տեղեկություններն արժանահավատ չեն» ձևակերպումից: Այսինքն, ապրանքների մաքսային արժեքը՝ մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա սահմանելու լիազորությունը կիրառելու հիմքը անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և (կամ) տեղեկություններն արժանահավատ չլինելու վերաբերյալ ենթադրություն անելու հիմնավոր պատճառների առկայությունն է, հետևաբար ներկայացված փաստաթղթերի կամ տեղեկությունների վերաբերյալ կասկածը բավարար չէ՝ ֆիզիկական անձի կողմից հայտագրված արժեքից տարբերվող մաքսային արժեք սահմանելու համար, եթե արդյունքում այն չի հաստատվում: Տվյալ դեպքում այն փաստը, որ հաշիվ-ապրանքագիրը կազմված է 23.04.2017թ.-ին, իսկ վճարման հանձնարարականի համաձայն՝ վճարումը կատարված է 24.04.2017թ. թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրի համար, ինքնին վարչական մարմնի կասկածն է և դեռ չի վկայում փաստաթղթի կամ դրանում արտացոլված տեղեկատվության ոչ արժանահավատ լինելու մասին:

Նշված դիրքորոշումը հիմնավորվում է նաև «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով հռչակված հավաստիության կանխավարկածի վերաբերյալ սկզբունքից ելնելով, մասնավորապես՝ նշված օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել: Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

Անդրադառնալով երկրորդ հարցադրմանը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Գանգատարկման հանձնաժողովը կատարել է ուսումնասիրություն **«www.tradecarview.com» կայք էջում:** Մասնավորապես, վարչական գործի նյութերում առկա են «<http://www.tradecarview.com>» կայքից տպված թվով 5 հատ էջեր, որոնցից առաջինի համաձայն՝ 2008թ. արտադրության «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի ավտոմեքենայի գինը սահմանված է 6.707 ԱՄՆ դոլար, երկրորդի

համաձայն՝ 4.244 ԱՄՆ դոլար, երրորդի համաձայն՝ 1.450 ԱՄՆ դոլար, չորրորդի համաձայն՝ 1.500 ԱՄՆ դոլար, հինգերորդի համաձայն՝ 3.196 ԱՄՆ դոլար:

Մինչդեռ, անտեսվել է այն հանգամանքը, որ Բողոք բերած անձի կողմից Ավտոմեքենան ձեռք է բերվել «<http://www.japanstart.ru>» կայքի միջոցով:

Մաքսային միության հանձնաժողովի 20.09.2010թ. «Ապրանքների մաքսային արժեքի հայտարարագրման, հսկողության և ճշգրտման կարգերի մասին» թիվ 376 որոշմամբ հաստատված ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգի 6-րդ կետի համաձայն՝ ապրանքների մաքսային արժեքի հսկողությունն իրականացնելիս կարող են օգտագործվել մաքսային մարմնի տրամադրության տակ եղած տեղեկությունները, մասնավորապես՝ (...) բորսայական սակարկությունների (գնանշումների), աճուրդների գների վերաբերյալ, ինչպես նաև գնային կատալոգներից ստացված տեղեկությունները (...): **Հսկողության արդյունքների օբյեկտիվությունն ապահովելու համար** պետք է օգտագործվեն վերլուծվող գործարքի պայմանների հետ **առավելագույնս հնարավոր համադրելի տեսք ունեցող տեղեկություններ:**

Արդյունքում ակնհայտ է, որ Գանգատարկման հանձնաժողովի կողմից ընտրված կայքում առկա և որպես հիմք ընդունված տեղեկությունները չէին կարող հնարավորինս ճշգրիտ կերպով արտացոլել Բողոք բերած անձի կողմից ձեռք բերված ավտոմեքենայի մոտավոր գինը: Այս կապակցությամբ հիմնավոր է Բողոք բերած անձի փաստարկն առ այն, որ Հանձնաժողովի կողմից անտեսվել է Մաքսային միության հանձնաժողովի 20.09.2010թ. թիվ 376 որոշմամբ հաստատված ապրանքների մաքսային արժեքի հսկողության կարգի 6-րդ կետի պահանջը:

Ավելին, նշված ուսումնասիրության արդյունքում ձեռքբերված եզրահանգումը չի բխել ուսումնասիրության հիման վրա ձեռքբերված փաստական հանգամանքներից:

Այս դեպքում, անկախ այն փաստից, որ այլ կայքից ձեռք են բերվել նաև նույնանման ավտոմեքենայի՝ ավելի բարձր գներով վաճառքի դրված լինելու փաստեր, Հանձնաժողովը գտնում է, որ դրանցով չեն հաստատվել Բողոք բերած անձի կողմից հայտագրված արժեքի արժանահավատության վերաբերյալ կասկածները, որպիսի պարագայում վերացել է նաև Օրենսգրքի 361-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով մաքսային այլ արժեք սահմանելու անհրաժեշտությունը:

Նշվածից հետևում է, որ Գանգատարկման հանձնաժողովը սխալ է մեկնաբանել Օրենսգրքի 361-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառման պայմանները, որոնց

բացակայության դեպքում Բողոք բերած անձի նկատմամբ պետք է կիրառելի համարվեր Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը, համաձայն որի՝ անձնական օգտագործման ապրանքների մաքսային արժեքը սահմանվում է ֆիզիկական անձի կողմից այդ ապրանքների հայտագրված արժեքի հիման վրա, որը հաստատվում է անձնական օգտագործման ապրանքների արժեքի մասին տեղեկություններ պարունակող փաստաթղթերի բնօրինակներով:

Բացի այդ, Բողոք բերած անձի կողմից Հանձնաժողովին ներկայացվել են՝ **«<http://www.japanstart.ru>» կայքից** տպված թվով 2 էջ, որի համաձայն՝ 2008թ. արտադրության «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի ավտոմեքենայի գինը սահմանված է 1.170 ԱՄՆ դոլար, ինչպես նաև **«<http://www.tradecarview.com>» կայքից** տպված թվով 4 էջ, որոնց համաձայն՝ 2008թ. արտադրության «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի ավտոմեքենայի գինը սահմանված է 1.450 ԱՄՆ դոլար: Նշված ապացույցները ևս հավաստում են այն հանգամանքը, որ Բողոք բերած անձի կողմից 03.08.2017թ. անձնական օգտագործման նպատակով ներմուծված Ավտոմեքենայի ձեռքբերման արժեքը՝ 1249 ԱՄՆ դոլար, համապատասխանում է նույնանման ապրանքների մասին գնային տեղեկություններին:

Նշվածի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով սահմանված հիմք՝ Գանգատարկման հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու և փոփոխելու համար:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, (...) եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝ ա) սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը: Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «ա» կետի պահանջներով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. Քաղաքացի Վաղարշ Բաղայանի 19.02.2018թ.-ի վարչական բողոքը բավարարել. բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 19.12.2017թ. թիվ 67/2 որոշումը և փոփոխել հետևյալ բովանդակությամբ. «Վաղարշ Բաղայանի բողոքը բավարարել. վերահաշվարկել Հայաստանի Հանրապետություն ներմուծված «Honda Edix (VIN# BE3-1203148)» մակնիշի 2008թ. արտադրության ավտոմեքենայի մաքսային արժեքը՝ հիմք ընդունելով թիվ NAT-344570 հաշիվ-ապրանքագրում նշված ապրանքի գինը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ